



«Քրիստոս պայծառակերպուեցաւ որպէսզի պայծառակերպող իր լոյսին ճառագայթները իյնան նաեւ բոլոր մարդոցս վրայ: Որպէսզի մենք եւս այժմէն պայծառակերպուինք՝ լուսաւորուած մտքով, հաւատքի ջահով լուսաւորելով մեր կեանքը եւ միշտ Աստուծոյ լոյսին մէջ քայլելով, մեր կեանքը դարձնելով հարազատ պատկերը Քրիստոսի երկրաւոր կեանքին, որպէսզի այս անգամ մեր կեանքին ու գործերուն հայելիին մէջէն մարդիկ կարենան Աստուծոյ պատկերն ու Աստուծոյ գործերը ճանչնալ ու զԱյն փառաւորել»,  
 Զարեհ Արք. Ազնաւորեան:

Ա. ՏԱՐԻ | ԹԻԻ 5 | ՅՈՒԼԻՍ 2007

Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵԼԵՑԻՈՅ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հոգետր Հովիւին Ե-ճամայի հասցէ՝ [derkarnig@sourphagop.com](mailto:derkarnig@sourphagop.com)  
 Ջրի բաժանորդագրման համար՝ [gantegh@sourphagop.com](mailto:gantegh@sourphagop.com)  
 Մեզի հետ կապ պահելու համար՝ [eglise58@sourphagop.com](mailto:eglise58@sourphagop.com)



[www.sourphagop.org/gantegh](http://www.sourphagop.org/gantegh)

**ՔՐԻՍՏՈՍԻ 12  
 ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՅ  
 ԵՒ ՊՕՂՈՍ  
 ԱՌԱՔԵԱԼԻ ՏՕՆԸ**

**7 ՅՈՒԼԻՍ, 2007**

12 Առաքեալները Յիսուսի անմիջական խմբակը եղան: Յուդա Իսկարիովտացի Տէրը մատնելէ ետք՝ մեռաւ: Յետ Յիսուսի Համբարձման, Պետրոս Առաքեալի կոչին վրայ, Մատաթիան ընտրուեցաւ որպէս տասներկրորդ Առաքեալ: Այս խմբակը Հոգիով լեցուած ընդարձակ առաքելութիւն մը յանձն առաւ եւ կատարեց Տիրոջ պատուը, որ կ'ըսէ. «գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք: Զանոնք մկրտեցէք Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին անունով: Անոնց սորվեցուցէք այն բոլոր պատուիրանները, որ ես ձեզի տուի. եւ անա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը» (Մտ 28.19-20):

Իսկ Պօղոս Առաքեալ, որ տասներեքերորդ Առաքեալը կոչուած է, հելլեն-ա-հռոմէական աշխարհին մէջ Քրիստոսի անձին եւ վարդապետութեան այնպիսի ներշնչեալ եւ իմացական թափանցումով մեկնաբանութիւնը ըրաւ, որ ազդեց բիւրատր հոգիներու վրայ, եւ զանոնք դարձուց Աւետարանի լոյսին:

Առաքեալներուն համար՝ «Հօր անսահման ծովէն գթութեանց բխումներ», կ'ըսէ շարականը:

**ՎԱՐԴԱՎԱՌԻ կամ  
 ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ**

**15 ՅՈՒԼԻՍ, 2007**

Ասիկա Եկեղեցոյ հինգ մեծ տօներէն մէկն է. երրորդը: Այս դէպքը պատմուած է երեք աւետարաններու մէջ. Մատթէոսի (17.1-13), Մարկոսի (9.2-13) եւ Դուկասի (9.28-36):

Ամառ էր եղանակը: Յիսուս իր աշակերտներէն Պետրոսը, Յակոբոսը եւ Յովնանցը հետը առնելով «բարձր լեռ մը» կ'ելլէ եւ այնտեղ կ'աշակերտուի անոնց դիմաց: «...իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան», կ'ըսէ Մատթէոս: Ապա կ'երեւան Մովսէս եւ Եղիա մարգարէները, որոնք Յիսուսի հետ կը խօսէին:

Զարմանահարաշ դէպքին կարեւոր մէկ կէտն է Աստուծոյ ձայնը, որ կ'ըսէ. «Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ. անոր մտիկ ըրէք» (Մտ 17.5):

Տօնին «Վարդավառ» անունը կու գայ հայ հեթանոսական ասանդութենէն: «Վարդավառ» կը նշանակէ «վարդերով վառող»: Յովնանցէս Վրդ. Տարօնեցի (10-11-րդ դարուն միջեւ) կը բացատրէ, թէ Աֆրոդիտէս կամ Աստղիկ դիցունքին նուիրուած ամառային տօն մը կար, երբ իբր նուէր վարդ կը մատուցանէին անոր արձանին: Հեթանոս Հայաստանի մէջ, Աֆրոդիտէսի տօնն էր Վարդավառը: Ս. Գրիգոր Լուսաւորիչ այս տօնին տեղ կը սահմանէ Յիսուսի Այլակերպութեան տօնը: Եւ այդ թուականէն ստորին «Վարդավառ» անունը նոր իմաստ կ'առնէ:

Տարօնեցին այսպէս կը բացատրէ այդ իմաստը. «վարդը երբ կոկոնի մէջ է, բայրիկ ամուշահոտութիւնը եւ գոյնիկ տեսքը իր մէջ պահուած ունի, սակայն երբ կոկոնէն դուրս ելլէ բայրն ու գոյնը ամենուրեք կը պարզէ. նոյնպէս ալ մեր Տէրը մարմնին մէջ ծրարած էր իր աստուածութեան վարդը, իսկ Թաքոր լեռան վրայ գայն յայտնեց իր աշակերտներուն...»:

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

Սիրելի ընթերցող,  
 Նախաքրիստոնէական ժամանակներու Հայաստանի հեթանոսական աստուածներու պանթէոնը հիմնականօրէն բաղկացած էր բարի տիպարներէ: Եթէ Հայաստան եղաւ Քրիստոնէութիւնն ընդունող առաջին պետութիւնը՝ այդ պատահական չէր: Հայ ժողովուրդը փոխադարձօրէն ազդած եւ ազդուած էր իր աստուածներու բարութենէն, այսպէս պատրաստուելով շնորհքի Աստծու ընկալման:

Այդ, Քրիստոս հեղեց իր լոյսը Հայաստան աշխարհի վրայ, բայց նաեւ մենք ունակութիւն ունէինք լոյսի այդ աղբիւրը ճանչնալու: Յարգելով մարդկային հոգիի պատրաստութիւնն ու կամքի ազատութիւնը, Աստուած բռնի չի խուժեր հոն ուր չէ հրախրուած: Հայ ժողովուրդը իր ընթացքով հրախիտեց լոյսը եւ ցոյց տուաւ որ ունէր հոգեւոր աստակութիւնն այդ լոյսով հաղորդուելու, անոր հետ սրբազան յարաբերութիւն մշակելու եւ անոր Աղբիւրին՝ Քրիստոսի նման պայծառակերպուելու... ապա վրայ հասաւ խաչը... որ հրաւեր էր գործնականօրէն ապրելու Քրիստոնէութիւնը:

Եկո՛ր սիրելի ընթերցող, հաւատքով յաղթենք վայրկեանի բերած բոլոր չարիքներուն... Քրիստոսի օրինակով բաց պահենք մեր հոգիի դռները պայծառակերպութեան... ապա խաչին... եւ վերջապէս... յարութեան:

**ԴԷՊԻ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ Ս. ՅԱԿՈԲԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ**

24 Յուլիս, 1958-ին, Պրն. Յակոբ Բաստրմանեանի տան մէջ գումարուած ժողովի ընթացքին, Պարոններ Լեւոն Տէր Ասատուրեան, Քերոբ Պայման եւ Քերոբ Պուսկեան տեղեկութիւն կու տան Սէն Զօթիքի վրայ գտնուող գործատեղի-շէնքի մը մասին (հասցէ՝ 250, rue St. Zotique, Ouest, Mtl.), որ նախապէս եկեղեցի եղած է: Պրն. Պայման կ'առաջարկէ, որ Գործադիր Մարմինը լրջօրէն զբաղի զանկա գնելու գաղափարով: Պրն. Տէր Ասատուրեան կ'երկրորդէ առաջարկը: Յետ կարծիքներու փոխանակման, ժողովականները կ'որոշեն գնել զանկա: Այդ շէնքը պիտի ըլլար Սէն Զօթիքեան Ս. Յակոբը:



**HYMNE DE LA  
TRANSFIGURATION  
DE NOTRE SEIGNEUR**

Par votre transfiguration sur la montagne  
Vous avez révélé votre puissance divine;  
Nous vous glorifions, ô lumière noétique!

Vous avez manifesté le rayonnement de  
votre gloire  
Par un éclat comparable à celui du soleil  
Illuminant vos créatures;  
Nous vous glorifions, ô lumière noétique!

Par votre transformation formidable  
Vous avez fait trembler vos disciples  
Et vous avez remplacé leur  
émerveillement  
Par l'amour de votre gloire divine;  
Nous vous glorifions, ô lumière noétique!

**HYMN OF THE  
TRANSFIGURATION  
OF OUR LORD**

By your transfiguration on the mountain  
you revealed your divine power;  
we glorify you, o noetic Light!

You manifested the radiance of your  
glory  
as a sunlike shine  
enlightening your creatures;  
we glorify you, o noetic Light!

With your awe inspiring transformation  
you made your disciples tremble,  
and you turned their wonder  
into the love of your divine glory;  
we glorify you, o noetic Light!

**ՎԱՐԴԱՎԱՌԻ ԿԱՄ  
ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ**

Լերան վրայ այլակերպուելով՝  
աստուածային զօրութիւնդ յայտնեցիր.  
Կը փառաւորենք քեզ,  
ո՛վ իմանալի լոյս:

Քու փառքիդ ճառագայթումը  
ցոյց տուիր՝  
արեգակնակերպ փայլմամբ  
արարածները լուսաւորելով.  
Կը փառաւորենք քեզ,  
ո՛վ իմանալի լոյս:

Ահագին կերպարանումով  
զարհուրեցուցիր աշակերտներդ,  
եւ հրաշքէն ապշումը ծառայեցուցիր՝  
աստուածային փառքդ սիրել տալու  
անոնց.  
Կը փառաւորենք քեզ,  
ո՛վ իմանալի լոյս:

**ՎԱՐԴ ՄԸ ԲԵՐ ԵԿԵՂԵՑԻ**  
Կիրակի 15 Յուլիս 2007

Վարդավառի Տօնին Առիթով՝  
Կիրակի 15 Յուլիս 2007-ին,

**ՎԱՐԴ ՄԸ ԲԵՐ  
ԵԿԵՂԵՑԻ  
ԵՒ ՄԱՄՆԱԿՑԻՐ  
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ:**

Կը Պատարագէ եւ կը քարոզէ  
Գերշ. Տ. Սուրբն Ս. Արք.  
Գաթարոյեան

Սկիզբ Սուրբ Պատարագի  
ժամը 11.00



*Bring A Rose To Church*  
SUNDAY, JULY 15, 2007

On Vartavar  
Sunday, July 15, 2007

**BRING A ROSE  
TO CHURCH  
AND PARTICIPATE  
IN THE HOLY MASS**

Celebrated by  
His Eminence Arch.  
Souren Kataroyan

Beginning at 11:00 a.m.

# ՅՈՒԼԻՍԵԱՆ ԽՈՐ

Անապատի մէջ կանչող մը կայ, որ ամէն շաբաթ Կիրակնօրեայ Ս. Գրային ընթերցումները կը պատրաստէ: Եւ վերստին կը կարդար արդէն գրաշարեալ հատուածը Զաքարիա մարգարէի (3.7-4.9): Երբ զիս տեսաւ, ըսաւ. «Տե՛ն մարգարէն ի՞նչ կ'ըսէ», եւ կարդաց. «Տէրը այս պատգամը կու տայ Զօրաբաբէլի.– Մեծ զօրքով կամ զէնքի ոյժով չէ, որ պիտի յաջողիս,– կ'ըսէ Ամենակալ Տէրը,– այլ իմ Հոգիովս: Ո՛չ մէկ դժուարութիւն պիտի կանգնի դիմացդ, եւ նույնիսկ եթէ լերան մը պէս ըլլան՝ պիտի հարթուին դաշտի նման»:

Շշմարիտ, ճշմարիտ է մարգարէն: Անոր ձայնը թէ՛ ինծի համար է, թէ՛ քեզի, թէ՛ անոր, եւ թէ...մեր բոլորին: Ականջ ունեցողը կը լսէ:

Գ.Բ

Please note that this is a simplified explanation of the events in the Armenian church for the month of July.  
Veuillez noter que ces explications représentent une version simplifiée des cérémonies de l'église arménienne pour le mois de juillet.